

47 Տեսեալ Սարգսի թէ ոչ կատարիւր
 Խոստումն Յակոբայ եւ սիրելեաց իւր,
 Զարմացեալ խոկայր եւ դարձեալ թախծիւր,
 Զի պատասխանիս թրղլծոյն իսկ շառնոյր:

48 Թէպէտ նա սրբաիւ կամաց Բարձրելոյն
 Յանձնեալ էր զանձըն եւ զոճ ապրելոյն,
 Այլ զի պարտն էր իսկ հոգալ զլաւ կելոյն
 Գիմէր առ օճան բարերար մարդոյն:

49 Վասն որոյ զբրէր դարձեալ իշխանաց,
 Զի զերծցեն իսպառ զինքն յայնց փորձանաց.
 Իսկ բարեկամք իւր ի նոյն նամակաց,
 Չառնուին բընաւ բզմին ի բազմաց:

50 Զի ունէր Յակոբ զոմանս ի Հայոց
 Ի նաւահանգիստ նաւուց Սախրզցուոց,
 Որք ի խարըսխել լաստից հասելոց
 Մըտանէին փոյթ յայնց ատակաց ծոց:

51 Որք եւ նաւաստեաց ասէին լալով,
 Թէ ունիք ըղթուղթ հայկական գըրով,
 Շընորհ աննէիք տալ մեզ զայն փութով,
 Զի ըսփոփիցիմք գօնէ նոյն թրղլծով:

52 Զի կայ, կըրկնէին, նոցուն լալագին,
 Արդ կապեալ յաքսորս ի ձեր իսկ կըղզին
 Մեր յոյժ սիրելի վարդապետ քեռին,
 Որոյ ընդ վաղուց մընամք նամակին:

53 Հաւատացեալ այնց անհոգ նաւորդաց
 Տային գիրս հայկեան նոյն կեղծաւորաց,
 Որք յանձնէին զայնս ապայ շոյտ և՛ անբայ
 Ի ձեռս Յակոբու կացեալ լըռակաց: